կ'առաջնորդէ իւր հօտին 'ի Տաւրիա, և կը բնակեցընէ Թերակղզւոյս կեդրոնական քաղաքը՝ Խարասու, նոյն արտօնութիւնքը զորս տէրութիւնը գաղթական գնալնուն պատճառաւ չնորհել էր ժողովրդեան, դարձեալ սեփականելով իւր հօտին։ Ս.յդչափ վիշտ և նեղութիւն կրելէն յետոյ, այն բազմարդիւն վարդապետն պատճառաւ ժողովրդեան անհամաձայնութեան՝ կը թողու իւր հօտը, և կը հեռանայ վշտագին դարձեալ յԵկատերինեսլաւ գաւառի մի գիւղի մէջ, և հոն կ'անցընէ իւր ծերութիւնը, ու կնքէ բազմարդիւն և վշտալից կեանքը [1]։ Կայսերական պարգևագրին զօրութեամբ, գաղթականաց առաջնորդք՝ մինչև կենաց վերջը՝ իրենց պաշտօնին մէջ հաստատ պիտի մնան. Տէր Յակոբայ այդպէս հեռանալը յայտնի կը ցուցընէ՝ որ անկարելի եղել է նմա մնալ իւր պաշտօնին մէջ. և 12 տարուան միջոց կրկին անգամ տեղէ տեղ գաղթող ժողովուրդը, որք շատ ու շատ զոհողութեանց և զրկմանց ենթարկուած են, անշուշտ՝ անձեռնհաս բարձրագոյն իշխանութեանց դէմ մաքառելու, իրենց համբերատար հովուին դէմ ըմբոստացել են, որ աշխատած է միշտ կատարել ժողովրդեան կամքը. խօսքիս մեծամեծ ապացոյց մի է Հայոց կաթողիկաց վերադարձն

1 Շատ տարի անցնելէն վերջէ (1859) Խարասուի Գեբարդոյ Հ. Վրթանէս վարդապետն Պուտուրեան, մարմարէ քանդակագործ տախտակ մի յարմարցընել կու տայ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մտից ձախակողմը, պատին մէջ, կոփել տալով բարեացաւարտ Տէր Յակոբայ կիսապատկերը. տախտակին վերի կողմը գրել տալով վարդապետին անունը, պարգևագրին ստացումը և մահուան տարին։